Հաստատված է
«Քվանտ» վարժարանի
գիտամանկավարժական խորհրդի կողմից
31.05.2014
Լրացումներով և խմբագրումը՝ 25.03.2022թ.

/նախագահի՝ Գրիգորի Հարությունյան

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «Քվանտ» վարժարանի յուրաքանչյուր աշակերտ իրավունք ունի ստանալու ՀՀ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան կրթություն, ընտրելու իր նախասիրություններին համապատասխան հոսքի դասարանը, մասնակցելու վարժարանի ներքին կյանքին, ընդունված կարգով ազատորեն արտահայտելու սեփական հայացքներն ու կարծիքը:
2. Աշակերտն իրեն հուզող ցանկացած հարցի կամ ուսուցչի աշխատանքի վերաբերյալ իր կարծիքը կարող է հայտնել տնօրենությանը՝ անձամբ, ավագի կամ դասղեկի միջոցով կամ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կազմակերպվող հարցումների ժամանակ:
3. Աշակերտը կարող է օգտվել վարժարանի գրադարանից, սոցիալ-հոգեբանական ծառայությունից:
4. Վարժարանի տեխնիկական միջոցներից աշակերտներն օգտվում են ըստ հաստատված կարգի :
5. Աշակերտները ստանում են լիարժեք տեղեկատվություն իրենց առաջադիմության, քննությունների և ստուգարքների արդյունքների վերաբերյալ, կարող են սահմանված կարգով բողոքարկել քննությունների և ստուգարքների արդյունքները:
6. **Վարժարանի աշակերտները պարտավոր են ծանոթանալ և հետևել վարժարանի ներքին կյանքը կանոնակարգող բոլոր փաստաթղթերին (աշխատանքային պլան, աշակերտի վարքագծի կանոններ և այլն), հրահանգներին, հայտարարություններին, իսկ ճամբարում** ՝ նաև «Ուղեծիր» ռազմամարզական ճամբարի փաստաթղթերի փաթեթին և կատարել դրանց պահանջները:
7. Արշավների, երթերի, էքսկուրսիաների և այլ միջոցառումների ժամանակ սովորողները հրահանգավորվում են և պարտավոր են կատարել հրահանգավորման պահանջները:
8. Միջազգային բակալավրիատի (ՄԲ) համակարգում սովորողները պարտավոր են պահպանել ոչ միայն վարժարանի, այլև ՄԲ կողմից ներկայացվող պահանջները:
9. Աշակերտն ամենուրեք պարտավոր է դրսևորել օրինակելի վարք:
10. Վարժարանում սովորող աղջիկները պետք է հագնվեն համեստ՝ ունենալով կոկիկ սանրվածք, առանց թատերական հարդարման և պճնանքի. նախընտրելի է հագնել մուգ գույնի կիսաշրջազգեստ և սպիտակ վերնաշապիկ: Տղաները պետք է ունենան կարճ կտրած մազեր (ընդունելի ուսուցիչների կողմից), նախընտրելի է հագնել սպիտակ վերնաշապիկ և մուգ գույնի տաբատ.արգելվում է բացի ֆիզկուլտուրա առարկայի դասերից դասամիջոցներին կամ դասերի ընթացքում կրել կիսատաբատ,սպորտային հագուստ: Սովորողներին արգելվում է վարժարան ներկայանալ պատռված ջինսով, կարճ տոպերով(կամ նմանատիպ հագուստով), օծված և զարդարված: Բարձր դասարանների տղաները, որոնք արդեն սափրվում են, պարտավոր են դպրոց հաճախել միշտ սափրված:
11. Աշակերտը պարտավոր է ամեն օր վարժարան ներկայանալ դասերը սկսվելուց առնվազն 5-10 րոպե առաջ՝ տնային հանձնարարությունները կատարած, անպայման իր հետ ունենալով աշակերտական պայուսակը, տվյալ օրվա համար անհրաժեշտ դասագրքերը,աշխատանքային տետրերը ու աշակերտական անցատոմսը:
12. Վարժարանի տարածք կարելի է մտնել և դուրս գալ աշակերտական անցատոմսով դասերի սկզբին և տուն գնալիս: Դասերի ընթացքում վարժարանից կարելի է դուրս գալ միայն ծնողի

գրությամբ կամ բժշկի թույտվությամբ՝ անցակետում թողնելով ուսումնական մասի կողմից տրված գրավոր թույլտվությունը: Առանց գրավոր թույլտվության դպրոցից դուրս եկած աշակերտն իրավունք չունի տվյալ օրվա ընթացքում ևս մեկ անգամ դպրոց մտնելու:

13. Դասամիջոցին արգելվում է միջանցքում բարձրաձայն խոսելը, աղմկելը, վազվզելը, խաղեր կազմակերպելը: Դասամիջոցի ավարտից հետո արգելվում է միջանցքում մնալը: Դասի սկիզբը հայտարարող զանգից անմիջապես հետո աշակերտը պարտավոր է մտնել դասասենյակ և սպասել ուսուցչին: Ուսուցչի բացակայության դեպքում ավագը կամ ավագի օգնականը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել տնօրենությանը:
14. Աշակերտը պարտավոր է զանգից առաջ անջատել բջջային հեռախոսը և այն դնել բջջային հեռախոսների համար նախատեսված պահարանում: Դասի ընթացքում օգտագործվող բջջային հեռախոսը կհանձնվի տնօրենությանը: Հեռախոսը առաջին անգամ կվերադարձվի ծնողին, իսկ կրկնվելու դեպքում աշակերտը կստանա խիստ նկատողություն:
15. Արգելվում է վարժարան հրավիրել նախկին դասընկերներին, ծանոթներին և այլոց:
16. Դասերից բացակայելու հաջորդ օրն աշակերտը դասին պետք է ներկայանա բժշկի տեղեկանքով կամ ծնողի կողմից գրված բացատրագիրով՝ բացակայության պատճառի մասին: Որևէ առիթով դասերից բացակայելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է ծնողի գրավոր դիմումը տնօրենությանը:
17. Աշակերտը պարտավոր է պահպանել մաքրություն և խնամքով վերաբերվել վարժարանի գույքին, չգրել և չփորագրել սեղանների, աթոռների, դռների և պատերի վրա: Հերթապահության օրերին աշակերտը պարտավոր է մաքրել և կարգի բերել դասասենյակը, ապահովել խոնավ ջնջոցի առկայությունը, պարբերաբար օդափոխել սենյակը:
18. Աշակերտը պարտավոր է հետևել իր էլեկտրոնային օրագրի օգտահաշվին: Կայքի գաղտնաբառը արգելվում է փոխանցել այլ անձանց՝ ծնողից կամ խնամակալից բացի : Արգելվում է այլ անձանց տվյալներով մուտք գործել վարժարանի կայք: Կայքում գրառումները պետք է արվեն բացառապես գրական հայերենով: Առցանց հարթակներում արգելվում են վիրավորական, անպարկեշտ արտահայտություններով գրառումները կամ հրապարակումները:
19. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին իրականացվում է դասարանի գույքի և տեխնիկական միջոցների գրավոր հանձնում-ընդունում՝ դասարանի դասղեկի, ավագի և ավագի օգնականի պատասխանատվությամբ: Դասասենյակի գույքի և տեխնիկական միջոցների պահպանումն իրականացվում է դասղեկի, ավագի և ավագի օգնականների անմիջական վերահսկողությամբ: Դասասենյակի գույքը և տեխնիկական միջոցները փչացնելու դեպքում պատասխանատվություն է կրում դասարանը՝ ամբողջ կազմով:
20. Աշակերտը պարտավոր է մասնակցել վարժարանում կազմակերպվող բոլոր միջոցառումներին (մաքրության օրեր, արշավներ, տոնակատարություններ, վարժարանի հավաքներ, կոլեկտիվ այցեր թանգարաններ ու համերգասրահներ և այլ վայրեր) և աշխատանքներին:
21. Վարժարանի առօրյային վերաբերող հարցերում աշակերտը պարտավոր է ենթարկվել վարժարանի բոլոր աշխատակիցներին (ուսուցիչներ, տնտեսական աշխատողներ և այլք) և հարգանքով վերաբերվել նրանց:
22. Կոլեկտիվ (դասարանական) միջոցառումները (ծնունդ, խնջույք և այլն) ինչպես վարժարանում, այնպես էլ վարժարանից դուրս անցկացվում են տնօրենության կամ դասղեկի համաձայնությամբ :
23. Դասարանի ավագի, դասղեկի, դասավանդող ուսուցչի և տնօրենության ներկայացուցչի պահանջները և հանձնարարությունները պարտադիր են աշակերտի համար՝ անկախ նրանից, թե ինչ կարծիք ունի ինքը տվյալ հարցի վերաբերյալ: Անհամաձայնության դեպքում աշակերտը կարող է իր բողոքը հայտնել տնօրենությանը միայն հանձնարարությունը կատարելուց հետո:
24. Գիտամանկավարժական և ավագների խորհուրդների որոշումները, ինչպես նաև տնօրենության հրամանները, կատարվում են առանց քննարկման:
25. Աշակերտը պարտավոր է ներկա լինել դասարանական ժողովներին և իրավունք ունի մասնակցելու որոշումների քննարկմանը և ընդունմանը: Արդեն ընդունված որոշումը պարտադիր

է դասարանի բոլոր աշակերտների համար՝ անկախ նրանից , թե ինչպիսի դիրքորոշում են ունեցել նրանք հարցը քննարկելու ժամանակ:

26. Դասարանական ժողով կարող են հրավիրվել ավագի (տեղակալի), դասղեկի, դասավանդող ուսուցչի, տնօրենության և աշակերտների մեկ երրորդ կողմից:
27. Ավագին և նրա օգնական(ներ)ին նշանակում և ազատում է տնօրենությունը՝ դասարանական ժողովի և դասղեկի ներկայացրած երեք թեկնածուներից: Ավագը դասարանի և տնօրենության կապող օղակն է:
28. Դասղեկը նշանակվում է տնօրենության կողմից և տնօրենության ներկայացուցիչն է դասարանում:
29. Վարժարանում արգելվում է ֆիզիկական բռնության գործադրումը: Ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները կառուցվում են փոխադարձ հարգանքի և հանդուրժողականության հիման վրա:
30. Ուսուցիչների, աշակերտների կամ դասընկերների նկատմամբ անհարգալից, հեգնական վերաբերմունքի, ինչպես նաև ցածր առաջադիմության ու վատ վարքի համար աշակերտի նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Համաձայն «ՀՀ Հանրակրթության մասին» օրենքի 21-րդ հոդվածի՝ վարժարանում գործում են պատժի հետևյալ միջոցները՝ բանավոր դիտողություն, գրավոր նկատողություն («Դեղին քարտ»), խիստ նկատողություն («Կարմիր քարտ»), «Զգուշացում» և պայմանագրի միակողմանի լուծում, այսինքն՝ հեռացում վարժարանից:
31. Նկատողություն կամ զգուշացում ստացած աշակերտի ծնողին ուղարկվում է համապատասխան ծանուցագիր: Ծանուցագիրը վերադարձվում է վարժարան՝ ծնողի ստորագրությամբ:
32. Երեք գրավոր նկատողություն(երեք «Դեղին քարտ») ստացած աշակերտի հարցը դրվում է քննարկման գիտամանկավարժական խորհրդում, որին կարող է հրավիրվել նաև ծնողը: Խորհուրդը կարող է ընդունել հատուկ որոշում՝ հարցի քննարկման հետաձգում (աշակերտին տրվում է ժամանակ՝ սխալը ուղղելու համար ՝ որոշման կայացումը ժամանակավորապես հետաձգելով), զգուշացում, աշակերտի հեռացում և այլն:
33. Աշակերտին բանավոր դիտողություն, գրավոր նկատողություն («Դեղին քարտ»), խիստ նկատողություն («Կարմիր քարտ») կարող են տալ վարժարանի բոլոր աշխատակիցները՝ դրա մասին տեղյակ պահելով տնօրենին կամ փոխտնօրենին գրավոր զեկուցագրի կամ բանավոր հաղորդման միջոցով:Տնօրենությունը, ելնելով զեկուցագրից, տալիս է համապատասխան հանձնարարությունը: Խիստ նկատողությունը համարժեք է երկու գրավոր նկատողության (մեկ «Կարմիր քարտ»-ը համարժեք է երկու «Դեղին քարտ»-ի):
34. Սովորողին «Զգուշացում» տալու կամ վարժարանից հեռացնելու (կնքված պայմանագիրը լուծելու) առաջարկություն տնօրենությանը կարող է ներկայացնել գիտամանկավարժական խորհուրդը: Բացառիկ դեպքերում տնօրենը կարող է միակողմանի լուծել վարժարանի և ծնողի միջև կնքված պայմանագիրը՝ առանց գիտամանկավարժական խորհրդի առաջարկության:
35. Ծխելու կամ ոգելից խմիչքներ օգտագործելու համար աշակերտին տրվում է խիստ նկատողություն («Կարմիր քարտ») կամ անմիջապես նրա հարցը դրվում է գիտամանկավարժական խորհրդի քննարկմանը:
36. Տասներկու ժամ անհարգելի բացակայության համար աշակերտին տրվում է գրավոր նկատողություն («Դեղին քարտ»), երկրորդ անգամ կրկնվելու դեպքում՝ խիստ նկատողություն («Կարմիր քարտ»):
37. Նկատողությունները և զգուշացումները կարող են չեղարկվել գիտամանկավարժական խորհրդի կողմից՝ հիմք ընդունելով դասղեկի,դասավանդող ուսուցիչների կամ էլ ավագների խորհրդի միջնորդությունը, եթե աշակերտը դրսևորել է օրինակելի վարք և բարձր առաջադիմություն:
38. Չեն չեղարկվում այն նկատողությունները, որոնք տրվել են խաբեության, ծխելու և ոգելից խմիչքներ օգտագործելու համար:
39. Վարժարանի տարածքը տեսահսկվում է, իսկ դասարաններում տեղադրված են հեռավար ուսուցման համար անհրաժեշտ տեսանկարահանման և ձայնագրման սարքեր: Սովորողները կարող են օգտագործել այդ սարքավորումները դասղեկի թույտվությամբ:

40. Հեռավար ուսուցման դեպքում աշակերտը պարտավոր է դասի սկզբից 5 րոպե առաջ աշակերտին վայել հագնված, համապատասխան գրքերով և գրենական պիտույքներով զբաղեցնել իր տեղը սեղանի մոտ՝ համակարգչի առջև, դասին միանալ տեսախցիկով և ուսուցչի հետ համագործակցել մինչև դասաժամի ավարտը: Դասին ուշ միանալու կամ հարթակից շուտ դուրս գալու, ինչպես նաև ուսուցչի պահանջներին չարձագանքելու դեպքում աշակերտը կստանա «բացակա»: Տեխնիկական խնդիրների մասին աշակերտը կամ ծնողը պարտավոր են տեղյակ պահել դասղեկին կամ դասարանի ավագին:
41. Սովորողը պարտավոր է իմանալ սույն կանոնները և ստորագրությամբ հաստատել, որ ծանոթացել է կանոնակարգին:

Դասղեկ՝ ——————————————————— ————————— ——/——/————թ.
ստորագր.

Աշակերտի վարքագծի կանոններին ծանոթ աշակերտների ստորագրությունը՝

--- դասարան

№	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ստորագրություն